

«ԲԱՋՄԱՎԵՊ» ՀԱՆԴԵՍԸ
(Նիմանդրման 150-ամյակի առթիվ)

Ս. Ա. ՇՏԻԿԱՆ

Ընդամենը ինը հոգուց էր բաղկացած հայազգի հոգևորականների այն խումբը, որոնք իրենց առաջնորդի՝ Մխիթար վարդապետ Սեբաստացու (1676 թ. փետրվարի 7, Սեբաստիա—1749 թ. ապրիլի 27, Վենետիկ, Ավագանի անունը՝ Մանուկ) գլխավորությամբ 1717 թ. սեպտեմբերի 5-ին ոտք դրեցին Իտալիայի Վենետիկ քաղաքից հարավ գտնվող «Սուրբ Ղազար» կղզին, «հավատավոր և ազգանպաստ» գործունեություն սկսելու համար։ Կղզին կատարելապես անտեր էր ու անբնակ, ուներ մեկ ջրհոր և մեկ կիսաքանդ աղոթատուն և նախորդ շուրջ երեք դարերի ընթացքում եղել էր «մարդկության ամենին, ավելի թշվառներուն՝ ուրուկներուն, բորոտներուն, հիվանդներուն և մուշտացիկ աղքատներուն» կացարան¹։ Եվ եթե հավելենք, որ հիշատակված ինը վարդապետների իրավական իարդավիճակը բնութագրված էր ռուս կամս եւ ցանկութեան իւրեանց», այսինքն, ոչ ոք հովանավոր և պաշտպան չէր նրանց թե՛ ֆինանսական, թե՛ հոգևոր և թե՛ պետական-օրենսդրական առումով, ապա մեր ասելիքը կամբողջանա։

Այսպիսի աննախանձելի սկիզբը, սակայն, ապագայի աշխատանքային գործունեության անորոշություն կամ անելիքների թերազդեցականություն չէր ենթադրում։ Մխիթարը դեռ վաղուց արդեն մշակել էր հետագայի իր ծավալելիք «գորություններու» ծրագիրը, ճիշտ է, ինչ-որ տեղ գուցե դեռ մինչև վերջ չամբողջացված, ինչ-որ հարցերում դեռ թերի ու պակասավոր, և որի հետևողական իրականացման էլ նա ձեռնամուխ եղավ Սուրբ Ղազար մտնելուն պես։ Այն է՝ ստեղծել կրոնական բնույթի հայագիտական-մշակութային մի կազմակերպություն, որը իր հնարավորությունների ու կարողությունների սահմաններում պետք է զբաղվեր կաթոլիկ հավատի հիմնահարցերի քննությամբ և համապատասխան ուսումնասիրություններ հրատարակելով (հոռվ-մեհաղավան աշխարհի և նրա միջնաբերդի՝ Վատիկանի համակրանքն ու հովանավորությունը ձեռք բերելու համար) և միաժամանակ՝ բանիբուն գործունեություն, ծավալել հայագիտության բնագավառում, իրեն ծնող ու սնող հաժողովրդին մտավոր սնունդ մատակարարելու և ուրեմն այստեղ էլ նրա հարգանքին ու պաշտպանությանը տրամադրված համար։ Ինչ եղավ Մխիթարի մշակած և նրա հաջորդների կողմից մեր ազգային-հասարակական կյանքում հետևողականորեն ներդրված այս «փոլիթիքի» հետևանքն ու արդյունքը, որն ի դեպ, շարունակվում է առ այսօր, հանրահայտ է և հանրաճանաչ այնքան, որ մանրամասնելու կամ համապատասխան մեկնաբանություններով ներկայացնելու կարիք չունի։ Այստեղ նշենք միայն, որ այդ «փոլիթիքը» տարիների պալ և դարերի տևողության ընթացքում հրաշալի կերպով արդարացրեց իրեն հանդիպակաց երկու «ճակատներից» էլ դրվատալից գոհաբանությունների և լծաքցված խանդաղատանքի անեզր վկայություններ կորզելով, որի բնականոն հետևանքով էլ՝ հարաճուն հաստատակամությամբ ավելացավ ու ավելացավ «Մխիթարա տան» անստույգ անունն ու դիտական անբեկանելի ճանաչումը։

¹ Հոգև. Թորոսյան, Վարդ Մխիթարայ աբբայի Սեբաստացույ, Վենետիկ, 1901, էջ 295։

Վերոհիշյալ բնույթն ու նպատակաուղղվածությունն ունեցող իր ծրագիր-նախագաղափարը իրականացնելու համար Մխիթար Սեբաստացին, ի թիվս ամենատարբեր բնույթի աստվածաբանական-հայագիտական գրականությունների «ի տիպ արձանացուցանելուն», շուտով ունեցավ նաև այդ ամենի մասին «գրասեր և բանիբուն» հայորդիներին տեղյակ պահելու ստիպողական կարիքը, իրենց հետո-մոտիկ անելիքների, իրենց գործի ու գործունեության մասին նրանց հետ մշտապես խոսք ու զրույցի բռնվելու ոչ պակաս կարևոր խնդիրը։ Այսպես էր ահա, որ Մխիթարը պետք է հղանար սեփական պարբերական ունենալու միտք-նախագաղափարը, որը հրատարակվելու էր գլխավոր, ունենալու էր կրոնաստվածաբանական և հայագիտական թեքում և անկանոն պարբերականությամբ, ամենայն հավանականությամբ երեք ամիսը մեկ անգամ, և որը նույնիսկ իր սեփական անունն արդեն ուներ՝ «Փող հաւատոյ»։ Անորոշ տեղեկություններ ունենալով այն մասին, որ գործը կազմակերպելու համար ստեղծված է եղել «կարգադրիչ մարմին» իր՝ Մխիթար Սեբաստացու գլխավորությամբ, և որ այդ «մարմինը» կարողացել է որոշակի բանակով նյութեր հավաքել հրատարակվելիք պարբերականի համար։ Նախ-նախնական բանակցություններ են վարվել Վենետիկի «հրատարակիչ տուններում»։ Հետ այդ պարբերականը «տպագրելու աղագաւ», բայց մեղ անհայտ ինչ-ինչ պատճառներով չայն նախապատրաստությամբ սկսված այդ գործը նյութա-կան կերպարանք չի ունեցել։ Սակայն ուժի մեջ էր մնում հիմնական գաղափարը և Մխիթարյան միաբանության ավանդապահ դեկավաթությունը տարիների ընթացքում կարողացավ այն երևակայել մերթ որպես «Տարեգրութիւն, որ է յիշատակարան» (Վենետիկ, 1799—1802), մերթ որպես «Յիշատակարան-Տարեգրութիւն» (1807—1808), մերթ վերջապես՝ «Եղանակ-Բիւզանդեան-Բազմավէպ» (1813—1820)², — ի դեպ, այս երեքի խմբագիր-հրատարակիչն էլ եղել է միևնույն անձնավորությունը՝ հանրահայտ Ղուկաս վարդապետ Խնճիճյանը։ Դրանցից և ոչ մեկը չկարողացավ իրականացնել միաբանության ներքին մտավորական ու ազգային-հասարակական կյանքի ձայնափողը լի-նելու համախումբ-նպատակը և, բնականաբար, շուտով դադարեց գոյություն ունենալուց։ Այսպես պետք է շարունակվեր էլի՝ մի որոշ ժամանակ, մինչև որ աշխարհ դար ինչպես Մխիթարյան միաբանության, այնպես էլ ամբողջ հայ ժողովրդի գիտակցական կյանքում բախտորոշ 1843 թվականը։

«Բաղմավեպ», օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելիքաց, աշխատասիրութիւն Մխիթարեան միաբանից», այսպիսի վերտառութիւնով էր, որ 1843 թ. կեսին հայազգի ընթերցող ու դիտական հասարակա-նությանը ներկայացավ Վենետիկի Մխիթարյան միաբանության՝ թվով չոր-րորդ պարբերականը։ Անվանումը թեև նոր չէր, բայց անսովոր էր, ինչ-որ տեղ նաև անհասկանալի։ Անհասկանալի այնքան, որ մի քանի համար անց, հատկապես այդ նպատակի համար դրված «Մանուցումն»-ով պարբերակա-նը ընթերցողներին մեկնաբանեց «Բաղմավեպ» անունը, այսինքն՝ «բազում բաներ վիպող», «բաղմավիսի բաներ պատմող»։

Մտորումների տեղիք տվող էր նաև հարցերի ընդգրկման այն համա-խումբը, որին որոշել էր անդրադառնալ պարբերականը։ Քննության առարկա դարձնել հասարակության, նրա զարգացման ու ներքին օրինաչափություննե-րի բացահայտման հետ կապվող հիմնահարցերը, դրա կողքին քննել «տուն-տեսական» խնդիրները, որոնք պետք է ներառնեին ազգային-տնտեսական կացութաձևը, «ստակի» ստացումն ու այն շրջանառության մեջ դնելու ձևերը, արժարժեքի «բանասիրական» և մանավանդ հայ բանասիրական բնագավառի

² Գարեգին Լեոնյանը սույն պարբերականի սկզբնավորման տարեթիվ է նշում 1803-ը (Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 3), որը սխալի հետևանք է [տե՛ս Ս. Շտիկ-յան, Ղ. Խնճիճյանի «Եղանակ Բյուզանդյան» տարեգիրքը՝ հոդվածը (Պատմա-բանասիրական հանդես, 1966, № 2)]։

բազմակնճիռ խնդիրները, այսինքն՝ բնագրերի քննական հրատարակություններ, անտիկ և նոր շրջանի դասականների՝ այլևայլ լեզուներից կատարվող չափածո և արձակ թարգմանություններ, տեսական-դրական տղիտական խընդիրներին առնչվող «հատումներ» և այլն. նման լայնանիստ ընդգրկումը հիմք էր տալիս պնդելու, որ այդպիսի՝ իրար բացառող խնդիրները մի պարբերականում մեկտեղելը չէր կարող շատ էլ խելացի ու խոհեմ քայլ համարվել, եվ գարմանայի չէր, որ «Բազմավեպի» ծնունդը ողջունող մեր մյուս պարբերականը՝ Զմյուռնիայի «Արշալույս արարատյանը», ուրախությամբ արձանագրելով հանդերձ «գրականական իր կրտսեր եղբոր» աշխարհ դալու հաճելի փաստը, մտավախություն էր հայտնում, որ «խնդիրներուն ընդգրկումին մեծակությունը ապահովարար, անոր կործանումին պատճառը կրնա

բլլալ»³։

Այս էր սովորեցնում հայկական պարբերական հրատարակության ոչ այնքան երկարատև փորձը, սակայն «Բազմավեպի» մասին բոլորովին էլ այդ կարծիքը չունեի նրա առաջին խմբագիրը՝ գործունյա ու աշխատասեր Գաբրիել վարդապետ Ավագովսկին, որն իր գիտական-մշակութային ու հասարակական դոգմունքների ամենածաղկուն տարիքում՝ երեսունմեկ տարեկան հասակում ստանձնել էր «խմբագրապետի» պարտականությունները («խմբագրական մարմին» անդամներ՝ Ղևոնդ Ալիշան և Հովհաննես Սորկունճյան) և հանդեսը խմբագրեց շուրջ վեց տարի։

Հարցն այստեղ սոսկ ֆինանսական օգնությունն ու օժանդակությունը չէր, որի բնագավառում «Բազմավեպը» երբեք էլ առանձնապես ապահովված չեղավ, չնայած այն բանին, որ նրան իր ողջ գոյության ընթացքում ֆինանսավորում էր Հովհաննես ամիրա Տատյանը, ինքն յայտնել վերաբերում էր ճակատագրականորեն կարևոր այն երկու հիմնադրացիներին, որոնք դամոկլյան սրի նման մշտապես և առանց բացառության սպառնալիքներն կախված են եղել հայկական բոլոր պարբերականների գլխին և որոնք առաջնահերթորեն լուծել չկարողանալու դեպքում նրանց խմբագիրներին մնում էր իրենց «ուղեղին, միտքին, հոգիին և ջիղերուն արգասիքին» (Հ. Պարոնյան) արդյունքը հանդիսացող հոգեզավակին «մահվան» անփառունակ հուղարկավորը դառնալ։

Այդ խնդիր-հիմնադրացիներից առաջինի՝ «Բազմավեպը» հնարավորին չափ գիտական բարձր մակարդակով հոդվածագիրների ու թղթակիցների մշտական ու հաստատուն քանակակազմով ապահովելու հոգս ու ցավից պարբերականի «խմբագրական մարմինն» ու նրա խմբագիրը հիմնականում երկյուղ չունեին։ Վենետիկի Մխիթարյան միաբանությունն անցյալ դարի սկզբներին արդեն ամենևին էլ այն չէր, ինչ որ էր նրա երանաշնորհ հիմնադրի՝ Մխիթար Սեբաստացու ժամանակ, որն իր գիտական-աշխատանքային «ակտիվում», ինչպես արդեն ասացինք, ընդամենը ինը հոգի ուներ, որոնք, ի դեպ, բացի իրենից՝ Մխիթար Սեբաստացուց, գրչի ու մտքի մարդիկ չէին։ Մեղ հետաքրքրող ժամանակաշրջանում միաբանությունը ըստ ամենայնի արդեն երևակե՛ք էր իրեն և աշխարհին էր նեոկայանում հալազգի վարդապետ-մտավորականների այնպիսի մի պատկառելի համախումբով, որոնք մեծ աշունն ու անկապտելի համբավը լայնորեն տարածված էր սմբնուրեք։ Հեղյալ՝ 1840-ական թվականներին իրենից գրական-հայագիտական փառքի զենիթում էին Արսեն Բագրատունին (սկզբնական շրջանում՝ Առան Սիսակյանը), Գաբրիել Ավետիքյանը, Վրույր Որմզդանը (հետագայի էռուարդ Հյուրմյուզյանը), Վահրամ Ռուբինյան անվամբ «պաճուճյալ» Մանվել Զախախյանն ու «Անտիգիոս Սիրիացի» կեղծանունով հայտնի Ծղիա Թումաճանը։ Միաբանության մտավոր-գիտական կյանքում արդեն ճանաչում ու անուն էին ստացել ինքը՝ Գաբրիել Ավագովսկին, Պետրոս Մինասյանը, Օգոստինյանի Պուրգենյանը, Խորեն և Ամբրոսիոս Գալֆայան եղբայրները, Գրիգորիս

³ Արշալույս արարատյան, 1845, № 166։

Հելալյանը, Հակոբոս Իսավերտենցը: Վերոհիշյալ ժամանակահատվածում, վերջապես, իրենց աշխատանքներով սկսել էին երևալ ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչները՝ Գարեգին Զարբհանալյանն ու Հարություն Թերզոնցը (նաև Հարություն Կաղեղյան), հետագայի հռչակավոր նորայր Բյուզանդացին, Ղևոնդ Սարգսյանը, 1860 թվականներից՝ Ղևոնդ Ալիշանը, Համադասաթ Թերշիմանյանը, Մանվել Քաջունին և էլի ուրիշները: Թվարկումն այստեղ կարելի է շարունակել, իսկ այս ամենը գալիս է հավաստելու այն կարևոր փաստը, որ «Բազմավեպ» պարբերականի թիկունքին, սկսած նրա առաջին իսկ համարի ժամանակներից, կանգնած էր հայ մտավորականների այնպիսի մի պատկանելի ջոկատ, որից ավելի լավը դժվար է երևակայել անգամ և որպիսին ահռելի բաղձանք ու տեսլապաշտ երազանք մնաց հայկական հին ու նոր ժամանակների՝ առանց բացառության բոլոր պարբերականների ու նրանց խմբագիրների համար: Այս էր ահա, այն հիմնական և առաջին պատճառը, որ «Բազմավեպը» սկզբից ևեթ կարողացավ հայագիտական-բանասիրական-թարգմանական-պատմահասարակական բարձրագույն մակարդակ ապահովել և, հենարան ունենալով գերազանցապես իր երիտասարդ ու վաստակներով ծանրաբեռնված վարձատյետ-լիթագրիչներին, կարողացավ մեր մշակույթի՝ հիշատակված բնագավառներում այնպիսի աննախադեպ առաջնահանգի հասնել, որ անկապտելի անուն ու հեղինակություն ապահովեց նրա համար: Եթե արձանագրենք միայն, որ տարիների ընթացքում «Բազմավեպում» տպագրված էլուսթերի անվիճելիորեն գերակշիռ մասը հաջողությամբ դիմացավ ժամանակի խստաշունչ քննությանը և իր գիտական-մասնագիտական արժեքը պահպանեց էսկիզիսի մեր օրերում, ապա մեր ասելիքը կամբողջանալ:

Պակաս ճշտորեն և պարբերականի մշտական գոյությունն ապահովելու տեսակետից հարկավոր հասարակահայացությունը ու գիտակցությամբ շուտովեց նաև մյուս՝ այսօրվա ձևակերպումով ասած, «Բազմավեպ»-ընթերցող հասարակություն» փոխհարաբերության հարցը: Արտահայտելով, անշուշտ, ամբողջ միաբանության դիրքորոշումը՝ Այվազովսկին ամսագիրը ճշտորեն նպատակաուղղեց այն գաղափարական միտվածությանը, որ հանդեսին չպետք է տալ խստիվ կրոնաստվածաբանական, եկեղեցական-հավատաքննական թեքում, որը որոշակիորեն կնշանակեր զարգացման անհեռանկար հորիզոններ բանալ նրա համար և նոր-նոր սկսած գործը դեռ խանձարուրում կործանման դատապարտելու: Այս էր պատճառը, որ «Բազմավեպը» ոչ միայն հիմնականում չզբաղվեց ալդ թեքումն ունեցող հարցերի նեղ-մասնագիտական քննությամբ, այլև ոչ սկզբում և ոչ էլ հետագայում իր ճակատին չունեցավ «կրոնական» «կրոնաստվածաբանական» կամ նման բնույթի որևէ աչք ենթախորագիր, ինչ որ առաջին հայացքից ավելի տրամաբանական պիտի լիներ նրա համար, քանի որ այն հոգևորական-կաթոլիկական միաբանության պարբերական էր: Իհարկե, ժամանակի և հասարակական-քաղաքական այլևայլ պայմանների բերումով, տարբեր տարիների ընթացքում հրատարակվեցին ոչ քիչ թվով հոդվածներ, որտեղ դրվատվեց ճշգրիտական ուղղափառ կաթոլիկ հավատը, հրատարակվեցին մեկից ավելի գեղարվեստական ստեղծագործություններ, որոնց հերոսները հպարտանում էին իրենց ճշգրիտական լույսով, և այլ հավատի համար: Անդամ խստիվ բացասական հոդված հրատարակվեց «Էվթեն Սյուզադիի մատենագիր» մասին, իսկ նրա «Թափառական հրեան» բնութագրվեց որպես «վնասակար գիրք, որ լի է ամբարշտական և աղտոտի տեսարաններով» (Բազմավեպ, 1846, № 7), գրվեց առանձին հոդված, որտեղ «տեսություն» զարգացվեց այն մասին, որ «Էվթեն Սյուզի թճարիզին գաղտնիքները», Շիլլերի «Վիպասանական ողբերգությունը», Գյոթեի «Վերթեր» վիպասանությունը, Ալ. Դյումայի «Մոնտե Թրիստոն», Վիկտոր Հյուգոյի «Թշվառները»... քողարկյալ ունին իրենց մեջ և իրենց թույլը և ապականությունը և մեր ազգին համար վաղաժաման են և տարաժամ» (Բազմավեպ, 1868 թ. № 7): Բայց նույնիսկ այս պարագայում «Բազմավեպի» համար կրոնադավա-

նաբանական կնճռոտ սխալաստիկան կամ հավատաքննական հարցերի մեր-
կապարանոց արժարժույթը առանցքային հարց ու նշանաձողային նպատակ
չնդազ: Դիրքորոշման այսպիսի հեռատես «ընթացքով» պարբերականի խմ-
բագրումունը միանգամից կարողացավ երկու արդյունքի հասնել: Նախ, ոչ
կաթոլիկ հայությունը, որն ինչպես հայտնի է, կազմում էր հայ ժողովրդի
անվիճելիորեն գերակշիռ հատվածը, ոչ միայն ներքին թշնամանքով ու ար-
տաքին անգույս ատելությամբ չլցվեց «Բազմավեպի» աստիճանաբար հրա-
տարակվող պրակների դեմ (ինչ որ, ի դեպ, այնպես որոշակիորեն նկատվեց
հայ բողոքական քարոզիչների «Ավետաբեր» շաբաթաթերթի նկատմամբ), այլև,
որ շատ կարևոր էր, անհապաղ դարձավ նրա մշտական ընթերցողն ու բա-
ժանորդագիրը: Եվ ապա, կաթոլիկ հայությունն էլ, նկատելով որ «Բազմավե-
պը» պատեհափոխ դեպքերով ու անհրաժեշտության թելադրությամբ է միայն
անդադարառնում հոգովեհաղվանության հարցերին և, որ առանձնապես ընդ-
գծելի էր, այդ ամենը արվում էր համապատասխան հրապարակախոսական
աակտի պահպանումով, այդ հավատը գիտահանրամատչելի մակարդակով
ժողովրդին ներկայացնելով ու մեկնաբանելով և ոչ թե այն ուղղագծորեն
պարտադրելով ու հարկադրելով, նույնպես օգնության ու պաշտպանության
ձեռք մեկնեց նրան: Դժվար չէ նկատել, որ սա այն խորիմաստ աշխատան-
քային» քաղաքականությունն էր, որն իր գործունեության արշալույսին այն-
պես հանգամանորեն ու հարկավոր դիվանագիտական շրջահայեցությամբ
մշակել էր միաբանության հիմնադիրը՝ երանաշնորհ Մխիթար Սեբաստա-
ցին: Այդ քաղաքականությունը հետագայի շուրջ մեկդարյա ժամանակահատ-
վածում ավելի հղկվելով ու կատարելագործվելով՝ արդեն առավել քան ար-
դարացրել էր իրեն և որը իր մանրագիտական դրսևորման ձևով հանդես
էր գալիս նաև ներկա պարագայում, և այս դեպքում էլ կարողանում էր հա-
ջողությամբ քննության դիմանալ:

Կար նաև «Բազմավեպ»-ընթերցող հասարակություն» փոխհարաբերու-
թյան մի ուրիշ կարևոր կողմը ևս, որը պարբերականի խմբագրությունը հա-
վանորեն ներքին երկարատև մտաբանումներից հետո դարձյալ կարողացել
էր հեռանկարային առումով ճիշտ լուծել: Պարբերականի խմբագրությունն ու
խմբագիրը, հանդիսանալով ողջ միաբանության գաղափարական ձայնափո-
ղը, հիանալի գիտեին, որ հայ ժողովուրդը բաղկացած չէր սոսկ բանասեր-
տեքստաբաններից, գրականագետ-գրադատներից կամ կամարթիկների, Շատոր-
րիանի, Ռուսսոյի, Լոնգֆելդի, Լամբերի գեղարվեստական ստեղծագործու-
թյունները որպես հոգևոր հանապազօրյա սնունդ ընդունելու մակարդակին
հասած ընթերցողներից, որոնք, ինչ խոսք, XIX դ. սկզբնական ժամանակա-
հատվածում բացարձակ փոքրամասնություն էին կազմում: Կար նաև հոդի
աշխատավորը իր բազում հոգս ու ցավերով, կար «տնայնագործ-ընտանե-
կանը», որը նույնպես իր բազմաբնույթ խնդիրներն ուներ: Կային «գործի
մարդիկ», որոնց հոգսը առևտուրն էր, ֆինանսական շրջապատույտն ու «գրա-
մական արժեքին կրկնապատիկը ստանալն» էր, կային, վերջապես, «սովոր-
ական» ընթերցողներ, որոնց ցանկալի էր զանազան բնույթի առտնին տե-
ղեկություններ իմանալ աշխարհիս շուրս ծագելով տեղի ունեցած հետաքր-
քերաշարժ իրադարձությունների մասին, կարգալ երգիծախառն միջադեպեր
համաշխարհային անուն ու ճանաչում ունեցող մարդկանց կյանքից և տուն:
Եվ պարբերականի՝ նաև այս կապակցությամբ մշակած աշխատանքային գոր-
ծելանկանակը ավելին յանկանալու հիմք չի տալիս. այն է՝ գիտական-հասա-
րակական, բանասիրական, թարգմանական, կրոնաստավածաբանական բնույ-
թի մեծարժեք ու ծանրակշիռ աշխատություններից զատ. ըստ հնարավորին
անդադարառնալ ամեն տիպի ու բովանդակության հարցերի, որոնք, համապա-
տասխան մակարդակն ունենալով հանդերձ, վերաբերեն ժամանակի հասա-
րակական կյանքի էությունը ոլորտներին: «Բազմավեպի» հենց առաջին
1843 թ. № 1-ում, օրինակ, գետեղված կամարթիկի «Աղօթք մանկան գար-
թուցելու» բանաստեղծության՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար
չափածո թարգմանությունը և նույն համարում կա հոդված՝ «Ահրամ սնու-

յանելու կերպը» խորագրով: Նույն թվականի № 16-ում Ղևոնդ Մարդարյանը՝ հետազոտի Ալիշանը, «Հայոց Ազգին պարծանքները» հոդվածում գիտաբանասիրական մեծարժեք տեղեկություններ է հաղորդում Հայկ Նահապետի մասին, բայց և նույն համարում Մանվել Սոֆյալյանը հոդվածում նախ՝ «Ակոռայի ջղախնայի ալևալի դեղեր» խորագրով: «Բազմավեպը» 1844 թ. № 19-ում հրատարակում է էդուարդ Հյուրմյուզյանի՝ պոեզիայի դերին ու նշանակությանը նվիրված տեսական-վերլուծական հոդվածը և՛ նրա «Հովիտ եւ հովուհի» գեղունը, դրանից անմիջապես հետո կան հոդվածներ օղապարիկի օգտագործման, շների տարբեր տեսակների ու նրանց հանդեպ տարվող խնամքի մասին, 1847 թ. № 12-ում, վերջապես, «Բազմավեպը» հրատարակում է Ղևոնդ Ալիշան-Նահապետի, «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը, որի գրապատմական մեծ դերի մասին այստեղ խոսելն ավելորդ է, և դրանից հետո՝ տեղեկություններ բնծուղող կենդանու մասին, ինչպես նաև բացատրված է, թե ինչ միջոցներով է ստացվում երկաթը և այլն: Հայ հանրության՝ առանց բացառության բոլոր խավերին ըստ իր հնարավորությունների ու կարողությունների «սպասավորիչ ըլլալու» աշխատանքային այս գործեղանակը, իհարկե, ավել կամ պակաս չափով և նայած տարիներին՝ ավել կամ պակաս հասարակական տարողությամբ, «Բազմավեպը» աննվազ հետևողականությամբ շարունակեց ամբողջ XIX դ. ընթացքում: Եվ այս առիթով խորհրդաբանության պնդումը, որ «Բազմավեպը» իր ծննդյան օրին իսկ նպատակ ունեցած չէ երբեք մեկ տեսակետ և կամ մեկ դասակարգ ընթերցողներու, այլ ժողովուրդը⁴, առավել քան ճշմարտացի էր և, ինչպես արդեն տեսանք, առավել քան բնութագրական:

Իր ժողովրդին ծառայելու նպատակագիր-գաղափարով առաջնորդվող պարբերականը, բնականաբար, պետք է որ լուծեր նրա հետ ըստ հնարավորին ճիշտ հաղորդակցվելու, նրան մինչև վերջին ստորակետը հասկանալի ու ըմբռնելի լինելու, այսինքն, հայոց լեզվի՝ որպես «աշխատանքային» գործամիջոցի խնդրում ճիշտ կողմնորոշվելու ամենևին էլ ոչ դյուրենկալ խնդիրը: Գաղափար չէ, որ դեռ դարասկզբից ծայր առած գրաբար-աշխարհաբար հակամարտությունը իր հարաճուն տևողականությամբ շարունակվում էր «Բազմավեպի» հրատարակության առաջին իսկ տարիներին և դրանից շատ հետո էլ, որ մեկից ավելի էին հայ ժողովրդի մտավոր ու հասարակական կյանքում մեծ անուն ու կշիռ ունեցող մեծությունները, որոնք գրով և բանիվ կոչ էին անում երկու ձեռքով կառնել «աստուածապարզին գրաբարից», հաղորդում համոզում էին հայրենակից հայազգիներին «ի գիր արկանել» միայն գրաբարը, քանզի աշխարհաբարը ընդամենը «ռամկորեն» էր, և որ գրաբարի այսպիսի կրթող պաշտպաններ ու ջատագովներ ամենևին էլ հազվագյուտ չէին հենց իր՝ Մխիթարյան միաբանության ներսում: Եվ այս պայմաններում «Բազմավեպը» կարողացավ հիմնավորապես դիմադարձ լինել գրաբարից և իր մեծ ու փոքր ընթերցողներին հաղորդակցվելու համար ամենաբանական և հետևաբար ճիշտ ձևը դարձրեց արևմտահայերենը: Համարձակ մի քայլ էր քա, որը թեև առատ նյութ ու հիմք տվեց ընդդիմադիր մտայնության ներկայացուցիչներին, որոնք ոչ քիչ անգամ հանդես եկան լեզվի հարցում «Բազմավեպի» մշակած այս «խոտելի ընթացքին» դեմ, բայց ի վերջո հաղթությունը վիճակված էր պատմականորեն: Նորին ու առաջավորին՝ արևմտահայերենին: Գրական արևմտահայերենը աստիճանաբար դարձավ պարբերականի՝ եթե կարելի է այսպես ասել «սեփական» լեզուն, ավելի ու ավելի հաստատուն կերպով իր տեղն ապահովեց նրա էջերում, անընդհատ գործածվելու և հետևաբար կատարելագործվելու հետևանքով ըստ ամենայնի մաքրվեց անհարկի փոխառված բառերից, ոճերից ու դարձվածքներից, դառնալով ողորկ ու կոկիկ և այդպես էլ շարունակեց իր կյանքը ընդհուպ մինչև մերօրյա «Բազմավեպը»:

4 Ա. Բ. Կարինյան, Անհարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, 1960, էջ 193:

իր հորժանմանը սկսելով այսպիսի լայն նախապատրաստությամբ և աշխատանքային քննադատական ճշգրտությամբ ներքին քաղաքականությունը, «Բազմա-վեզրյա անցյալ դարի 60—70-ական թվականներից սկսած, վճռականորեն խմբագրողներին՝ Ղևոնդ Ելիշավթի, Հմայակ Պապկոյանի, Աթաղինես Ղափթանյանի և մանավանդ Հակոբ Իսավերտենցի տարիներից սկսած» նա իր էջերում «Հյուսիսային» հայ մշակութայինության՝ ամենաապրանքային բնագավառի ներկայացուցիչներին, որոնք ոչ միայն Մխիթարյան միաբանության անդամ չէին, այլ նույնիսկ հոգևորական չէին, և դեռ ավելին, հակընդդեմ որևէ այլ կրոնական կազմակերպության ներկայացուցիչ էին։ Այս էլ էր նորությունը և առավել քան զարմանալի՝ կրոնական միաբանության խոսափող հանդիսացող պարբերականի համար, որի համանմաններից և ոչ մեկը (օրինակ, «Չիլիթա քաթոլիկա» իտալալեզու հանդեսը, Պոլսի «Նոյեմբերյան») ոչ մի ժամանակ չճանաչեց «այլերից» որևէ մեկին, իր դավանակիցներից բացի, և հետևաբար հետևողականությամբ դռները փակեց «այլերի» առջև։ Բոլորովին այլ ձևով ընթացավ, սակայն, «Բազմավեզր» գործունեությունը 1850-ական թվականներից սկսած, նրա էջերում, «Ազգային կամ հայախոս առածը» ընդհանուր խորագրի ներքո, պարբերաբար սկսում է հանդես գալ էջմիածնի, այսինքն՝ կաթոլիկների նկատմամբ հակընդդեմ միաբանության անդամ Աբել Մխիթարյանը, նույն թվականներին, ապրանքի գնողունակ արժեքը որոշելու, «ստակին շահը ճշտված օգտագործելու» վերաբերյալ հոգավածներով հանդես է դալիս պոլսահայ տնտեսաբան Նիկողայոս Չորալյանը 1851 թ. նոյեմբերից, «Բազմավեզր» սկսեց հրատարակել լամարթինի «Լոնտրայի մեջ առավուտ մը, կամ պահպանողական ու աշխարհակործան ընկերականություն» հոդվածը, որը ֆրանսիական բնագրից արևմտահայերեն էր թարգմանել Փարիզի Առևտրական բարձրագույն վարժարանի ուսանող Կարապետ Ությունյանը։ Ի դեպ, Փարիզում, 1843 թ. փետրվարյան հեղափոխության ժամանակ, նա մեկից ավելի անգամ խոսել էր թե՛ կաթոլիկ հավատի և թե՛ նրա գաղափարախոսների դեմ։ 1854 թ. հունվարին «Բազմավեզր» հրատարակում է Երզնկա քաղաքի քահանա տեղ. Ստեփանի «Անի կամ Գամախ ամրոց» տեղագրական հոդվածը, որը խմբագրությանն էր առաքել Սերովբե Պետրոսյան-Պատկանյանը, իսկ երկու տարի անց, ֆրանսիական կատարված արևմտահայերեն թարգմանություններով պարբերականում սկսում է հանդես գալ Պոլսում իր դերասանական գործունեությունն արդեն սկսած Սրապիոն Թղլյանը։ 1861 թ. մարտին, «Բազմավեզր» հրատարակեց երկարաշունչ գրաբար մի բանաստեղծություն, որի հեղինակը, սակայն, իզական սեռից էր՝ Սրբուհի Աստվածատուրյան, մի երևույթ, որ եզակի էր հայ կնոջ համար։ Նվ եթե այս բանաստեղծության լույս ընծայումը հասարակական համապատասխան հընչեղության պատճառ չեղավ, ապա 1864 թ. օգոստոսին «Պոլսեցի օրիորդ մը» ստորագրությամբ տպագրված «Գարուն» գողտրիկ բանաստեղծությունը եկավ ազդարարելու հայ գեղարվեստական գրականության անդամատանում մի նոր դաժանակամիտ Սրբուհի Տյուսարի հայտնության փաստը։ Աշխատանքային «Բազմավեզր» հետագա տարիների գործունեության մեջ և այդ էր պատճառը, որ նրա էջերում հաճախ հանդես էին գալիս Թովմաս Թերզյանը, Մկրտիչ Աճեմյանը, էմմանուել Ծալյանը, Թիֆլիսաբնակ բանասեր, հետագայում արդ քաղաքի քաղաքագլուխ Գալուստ Շիրմազանյանը (սկզբնական շրջանում՝ Շիրմազանյան-Վարդանյան), Նորայր Բուզանդյանը, պոլսահայ մտավորականներ Կարապետ Ռեիզյանն ու Հովակիմ Երեմյանը և ուրիշ-ուրիշներ։ Երևույթի բնականոն հետևանքն այն եղավ, որ «Բազմավեզր» տարիների իր ընդ-

5 «Բազմավեզր» խմբագրողների լրիվ ցանկը (մինչև 1942 թ.) տե՛ս Ս. Շախկյան, Հայեր գրականության ժամանակագրություն (1801—1950), Երևան, 1973, էջ 259—260։

6 Տե՛ս Ա. Շախկյան, Սրբուհի Տյուսար, Երևան, 1963, էջ 13—14։

թացքում» կարողացավ հաստատուն ու հիմնավոր «մուտք» ունենալ աշխարհի տուրքեր ծալրերում ընկնող առանց բացառության բոլոր հայազգի ընթերցողների կայարանները, դարձավ նրանց սեղանի պարբերականն ու ընթերցանության սպասվելիք հոգևոր սնունդը, դարձավ, և սա թերևս ամենակարևորն էր, նրանց մտավոր-գիտական ոգորումները կազմակերպող, դրանց ընթացք և ուղղություն տվող առաջագիր ամսագրերից մեկը: Ուստի հասկանալի է «Խմբագրական մարմին» չթափված ոգևորությունը, երբ 1870-ական թվականներին, իր ընթերցողներին հպարտությամբ տեղեկացնում էր, որ «Բազմավերը» տարածվում է մինչև Կ. Պոլիս, Զմյուռնիա, Կալկաթա, Բաղդադ, Կարին, Նգիպտոս, Փարիզ, Լոնդոն, Մոսկվա, Թիֆլիս, Բաքու «և մեկալ հայաշատ վայրք»:

Այսօր էլ, հարյուր հիսուն տարիների պատկառելի բեռը շալակին, շարունակում է իր «անստերիլ ընթացքը» Վենետիկի Միլիթարյան միաբանության «Բազմավեր» հայադիտական, բանասիրական, գրական հանդեսը, միանգամայն իրավացիորեն վայելիով հայ ժողովրդի նրիցագույն պարբերականը լինելու բարձր փառքն ու պատիվը: Ժամանակներն ու հասարակական-քաղաքական փոփոխահույզ իրադարձությունները, ինչպես այդ սպասելի էր ու բնական, իրենց անբեկանելի կնիքը դրեցին նրա «գոյապահպանման ընթացքի» վրա, որի հետևանքով էլ, սկսելով իր արդյունաշատ գործունեությունը որպես ներկաբաթաթերթ, այն տարիներ անց «վերածվեց» որպես ամսագիր, ապա «Նոր շարք» ընդհանուր խորագրի ներքո դարձավ եռամսյա հանդես: Մի հայտնի ժամանակ անց, հաջորդեց վերադարձը դեպի ամսագրային պարբերացումը, ապա դարավերջի և դարասկզբի անագորույն դեպքերի հարկադրական ճնշման ներքո «Բազմավեր» դարձավ տարեգիրք, արդեն մեր օրերում՝ քսաներորդ դարի քառասնական թվականներից սկսած, պարբերականն ստացավ «հայագիտական, բանասիրական, գրական հանդես» հորջորջումը, որը և պահպանում է առ այսօր: Պարբերականության բնագավառում եղած այս մեծ ու փոքր փոփոխությունները, սակայն, գիտական-հայագիտական բնույթի որակական վերաբնույնների խոտելի երևույթը չունեն իրենց մեջ: Հարյուր հիսուն մեծ ու փոքր հատուկների մի ամբողջ գրադարանով հայ ժողովրդին ներկայացող «Բազմավեր» միշտ էլ կարողացել է պահպանել իր գիտական բարձր մակարդակը և ուրեմն այդ բնագավառի առաջատարներից մեկը լինելու իր անկապտելի իրավունքը: Այսօր հանդեսը պաշտոնապես դիմում է որպես Սուրբ Ղազարի «Հայկական ճեմարանի» («Academia Armenia») անդամների գաղափարական ու գիտական խոսնակը, «Հայկական ճեմարանի», որի հիմնադրումը դարձյալ գալիս էր անցյալ դարի 40—50-ական թվականներից, և որը մշտապես համալրվելով հայ և օտարազգի հայագետների պատկառազու փաղանգով, հարատևում է առ այսօր: Հանդեսի խմբագրությունը հաստատուն կերպով ջարդանակում է վարել դրական-աշխատանքային այն քաղաքականությունը, որը ուժի մեջ մտավ դեռ Գաբրիել Այվազովսկու ժամանակներից և տարիների տևողության ընթացքում հիմնավորապես արդարացրեց իրեն: Այն է՝ միաբանության անդամ տվյալ հեղինակի՝ արդեն փառավորած աշխատությունը նախ հատվածաբար հրատարակել պարբերականի էջերում, ըստ որում, հաճախ մի քանի տարի շարունակ, և ապա, ընթերցողների այլևայլ բնույթի կարծիքները հաշվի առնելուց հետո, այն վերահրատարակել առանձին գրքով: Դրա շնորհիվ՝ հանդեսի ջանքերով այսօր ստեղծվել է հայագիտական-բանասիրական գրականության մի ամբողջ շարք, իր ինքնուրույն «Հայագիտական մատենաշար «Բազմավեր» ընդհանուր վերաբնույնով, որի ներքո առանձին գրքույկներով հանդես եկած թե՛ հայազգի և թե՛ օտարալեզու հեղինակների մեծ ու փոքր աշխատությունները ավելին բաղձալու համար հիմք չեն տալիս: Դրանցից Պողոս Անանյանի «Սեպեռի» աստվածության գրքի մասին քանի մը լուսաբանություններ» (Վենետիկ, 1973), Մեսրոպ Զանաշյանի «Պետրոս Դուրյան,

ЖУРНАЛ «БАЗМАВЕП»
(к 150-летию со дня основания)

С. А. ШТИКЯН

Резюме

Основанный в 1843 году в Венеции силами и научным потенциалом Венецианской армянской мхитаристской конгрегации, журнал «Базмавеп» («Многовестник», «Полистор»; первый редактор—Габриэл Айвазовский, старший брат всемирно известного художника-мариниста Ивана Айвазовского) сделал очень многое для развития как научной, так и художественной мысли в Армении. Журнал продолжает свою деятельность и ныне, публикуя переводы лучших произведений французских, английских, немецких, итальянских, испанских писателей.